ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳԻՏԱԿԱՆ

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՔՍԻՄԻԱՆՈՍԻ

Ի ՀԱՅԳՅԻՆԿ ՄԵՐՁ Ի ՎԻԷՆՆԱ

«Եթէ ճշմարիտ է որ ժողովրդեան մեծ մասը կը հաւանի զիս Մէքսիկոյ իշխան անուանող վիճակարկութեան, կը մեկնիմ քսան և չորս ժամու մէջ... այն դաշամբ որ ազգային կամքը այնու կերպով յայտնուի, որ ամենևին տարակոյս չմնայ իմ ազատ ընտրութեանս վրայ»։

Էր ամն 1864, երբ Մաքսիմիանոս Արշիդուքս Աւստրիոյ կ'ըսէր այս խօսքերս այն պատգամաւորաց, որք ներկայանալով իշխանին, կ'ընծայէին իրեն Մէքսիկոյ թագաւորական գահը։ Դժբախտ Մաքսիմիանոս կը կարծէր որ ժողովրդեան ազատ ընտրութեամբը պիտի կարենայ կանոնաւոր տէրութիւն մը հիմնել և այնպէս սկսանել քաղաքագիտական և յառաջադիմական վերանորոգութիւն մը. բայց խաբուեցաւ. և այս խաբէութեան հետևանքներն քաջածանօթ են բոլոր աշխարհի, ուստի և աւելորդ կրկին անգամ յիշատակել հոս։

Երբ Մաքսիմիանոս ամենայն յաջողութիւն գտնալու յուսով ճամբայ պիտի ելնար դէպ 'ի Մէքսիկոյ, իր Շէօնպրունի զուարճալի պարտէզը՝ զոր հիանալի տեղ մը դարձուցեր էր 'ի բնակութիւն, Հայդցինկի հասարակութեան պարգևեց։

Յամին 1867 Մաքսիմիանոսի սպանութեան անակնկալ աղետալի դէպքն պատահելով, Հայդցինկի հասարակութիւնն 'ի գութ շարժած և երախտագէտ առ իւր պարգևատուն, որոշեց այս վեհանձն և չարաբախտ իշխանին արձան մը կանգնել նոյն իր ընծայած պարտիզին մէջ, զոր և կատարեց։ Այս յիշատակարանին վրայ ըստ դատելոյ ճարտարաց և արուեստագիտաց մեծ ճարտարութիւն և կատարելութիւն կը տեսնուի։

Արձանը որ հալեալ թնդանօթից պղնձէ շինուած է, ութը ոտք և երկու բթաչափ բարձրութիւն ունի. և կանգնած է Քարրարայի մարմարէ շինած ինն ոտք բարձրութեամբ պատուանդանի մը վրայ։

Այս յիշատակարանիս կանգման հանդէսը կատարուեցաւ փառաւորապէս յամին 1871 Նոյեմբերի եօթին, յանդիման Փրանկիսկոս Յովսէփ կայսեր և մեծամեծաց Տէրութեան։

ԹԻԷՐ, ՄԱՔ ՄԱՀՈՆ ԵՒ ԳԱՂԼԻՈՅ ՆՈՐ ՊԱՇՏՕՆԱՐԱՆԸ

Ինկաւ Թիէր՝ ինչպէս կը նախագուշակուէր. աջակողմեանց և աջակեդրոնական կողմանց անհաշտ ատելութիւնն ընդդէմ Թիէրի՝ վերջապէս յաղթանակեց և տապալեց զԹիէր յիշխանութենէ։

Ի՞նչ էր արդեօք անոնց այնքան անողոքելի ատելութեան, որով և Թիէրի այնքան արդիւնաւոր անձի մը կործանման պատճառը։ Մեծանուն աշխարհագէտը ուզելով վերջ մը տալ երկրին առժամանակեայ և անհաստատ վիճակին, և հետևաբար ապահովել Գաղղիոյ բախտը, ուզեց իբրև որոշեալ և հաստատ կառավարութիւն հրատարակել հանրապետական կառավարութիւնը. և ահա այս պատճառաւ Ազգային ժողովոյն մէջ եղած անվերջանալի կռիւն որ մինչև ցայնժամ ուրիշ կերպարան ունէր, փոխուեցաւ և եղաւ կռիւ ընդ մէջ հանրապետականաց և